

սխալին երեսը կիսկիմի գաւառին է, եւ ուր կը գտնուին Ճորոխի աջ ափի բոլոր հովիտները, զորոնք յիշեցինք: Այս լեռնագիծը կը կոչուի Հալէ—ոյ (— Կիպերդ չունի անունս —) այն գլխաւոր լեռնանցքէն առեալ, ուսկից կ'անցնէր հին ուղին ալ՝ իջնալով Ընկուզեկի (Կ. „Jüngüzek“) ձորէն դէպ ի ձորաբերանը կեցած սեպաբերձ համանուն բերդը, որ Թորթումի գլխաւոր հովտին մէջ է: Անցողակի նշանակեցք որ այս կողմերը ձորաբերանները “Դուռ,, (“Չորդուռ,,) կոչել սովորութիւն է: Ռազմագիտական տեսակիտով վերջերս շինուած էր խճուղի մը, որ Կարնէն կ'անցնէր Կարնոյ-կիրճը, եւ Չարեւ լեռնանցքը ելլելով՝ կ'իջնար Թորթումի գլխաւոր հովիտը, դէպ ի Արսիս հասնելու դիտաւորութեամբ: Այս գլխաւոր հովիտը կը սկսի այն լեռնաշղթայէն, որ Կարնոյ դաշտը հիւսիսէն կը պատէ, հնութեան Կապոյտ լերինք, այժմ՝ Թուրքերէն Դումլի կոչուած, Հայերէն՝ Նփրատայ աղբերականց մասին աւանդութենէ մ'առեալ՝ Խաչափայտի լեռներ: Ասոր գագաթներէն, որ ջրաբաշխ են Նփրատայ եւ Ճորոխի, Թորթում կ'երեւայ իբր բարձր լեռներէ պատուած աշխարհ մը, որուն